



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ
ԱՌՒԳԻՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝
Պալատ) խորհուրդը,

քննության առնելով Պալատում աուդիտ հրավիրելու հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի 2012թ. հերթական
աուդիտորական ստուգումն իրականացրել է «Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀԶ ՍՊ
ընկերությունը, որը Պալատի կանոնադրության 22.2 կետի համաձայն
**(Փաստաբանների պալատի աուդիտը չի կարող իրականացվել
անընդմեջ նույն անձի (աուդիտորի) կամ նույն կազմակերպության կողմից)**
չի կարող աուդիտ իրականացնել,

հիմք ընդունելով այն, որ Հայաստանի Հանրապետությունում 31.08.2013թ.
դրությամբ գործում են աուդիտորական ծառայություններ իրականացնող 32
լիցենզավորված կազմակերպություն,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ լրացուցիչ ֆինանսական
ծախսեր անհարկի չկատարելու անհրաժեշտությունից ելնելով, առավել
նպատակահարմար է աուդիտ անցկացնել ողջ 2013 թվականի համար, այլ ոչ թե՛
2013թ. 9 ամիսների,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի,
Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 16-րդ ենթակետի, 22.2. և 22.3 կետերի
պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց

- Պալատի ֆինանսական գործունեությունը սրուզելու համար 2013թ.
հունվարից հոկտեմբեր ամիսների համար արտահերթ աուդիտորական
ստուգում անցկացնելու հարցը հերաձգել և աուդիտի անցկացման հարցին
անդրադառնալ 2014 թվականին՝ ամբողջ 2013 թվականի համար:

- Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ նախապարաստել
աուդիտորական գործունեություն իրականացնող անձանց ցանկը, գնային
առաջարկները և Պալատի խորհրդին ապահովել աուդիտի հետ կապված
անհրաժեշտ այլ տեղեկություններով:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

22 հոկտեմբեր 2013թ.

թիվ 27/7-Լ

Երևան